Լուսանկարները՝ Անի Հովհաննիսյանի | UN Women Armenia

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը չափազանց կարևոր է բնական աղետներին, հակամարտություններին և հումանիտար ճգնաժամերին ժամանակին և համակարգված արձագանքելու համար: Համապարփակ պատրաստվածության ռազմավարությունը ներառում է հստակ շրջանակներ, ռեսուրսներ և հաղորդակցման մեխանիզմներ:[1]

Ճգնաժամերի ընթացքում կանայք, երեխաները և խմբերը բախվում են մի շարք համակցված ռիսկերի: Այդ ընթացքում աճում են հատկապես կանանց նկատմամբ բռնության, տեղահանման և առողջապահության նվազ հասանելիության ռիսկերը:[2]

Գենդերազգայուն միջոցառումներ՝ արտակարգ իրավիճակներում

Կանանց անվտանգություն

Գենդերային հիմքով բռնությունը (ԳԲ) արտակարգ իրավիճակների լայնորեն տարածված խնդիրներից է. տեղահանված բնակչությունը և վերապրածները կարող են ենթարկվել սեռական բռնության, շահագործման և թրաֆիքինգի: Արտակարգ իրավիճակների արձագանքման պլաններում պետք է առաջնահերթություն տրվի կանանց և աղջիկների համար ապահով տարածքների՝ ներառյալ հատուկ ապաստարանների ստեղծմանը և սեռական բռնությունից պաշտպանությանը: [3]

Մարդասիրական գործողություններում գենդերային բռնության միջամտությունների ինտեգրման Միջգերատեսչական մշտական կոմիտեի (IASC) ուղեցույցերն ընգծում են բազմոլորտ մոտեցման անհրաժեշտությունը՝ ապահովելու ճգնաժամերի ընթացքում կանանց ֆիզիկական անվտանգությունը՝ անվտանգության ուժերի, մարդասիրական արձագանքողների և համայնքի առաջնորդների հստակ դերաբաժանումով:[4]

Հոգեկան առողջություն

Կանայք և երեխաները մեծապես տուժում են ճգնաժամերի հոգեբանական ազդեցությունից՝ ներառյալ բռնության, տեղահանության և ընտանիքի պառակտման արդյունքում առաջացած տրավմաները: Արտակարգ իրավիճակների ծրագրերում ներառված հոգեկան առողջության ծառայությունները պետք է լինեն մատչելի և գենդերազգայուն՝ առաջարկելով տրավմաների վերաբերյալ տեղեկացված խնամք և խորհրդատվություն: [5]

Ռեսուրսների հասանելիություն

Արտակարգ իրավիճակներում կանայք հաճախ բախվում են այնպիսի հիմնարար ռեսուրսների հասանելիության խոչընդոտների, ինչպիսիք են սնունդը, մաքուր ջուրը, ապաստանը և առողջապահական ծառայությունները: Այս խոչընդոտները հաճախ սրվում են ավանդական գենդերային դերաբաժանումների և սահմանափակ շարժունակության պատճառով՝ անվտանգության նկատառումներից ելնելով: [6]

Արտակարգ իրավիճակների արձագանքման պլանները պետք է ապահովեն, որ կանայք, որոնք ղեկավարում են տնային տնտեսություններ, հղի կանայք և հաշմանդամություն ունեցող անձինք ունենան ռեսուրսների և ծառայությունների առաջնահերթ հասանելիություն:[7]

Արտակարգ իրավիճակների հայաստանյան համատեքստը

2023 թվականին Լեռնային Ղարաբաղից տեղահանված ավելի քան 100,000 բնակչության շուրջ 70%-ը կազմել են կանայք և երեխաները: Այս փաստն ընդգծում է Հայաստանում գենդերազգայուն արտակարգ իրավիճակների ծրագրերի իրագործման հրատապ անհրաժեշտությունը:

Փախստական կանայք և աղջիկները, ելնելով բազմակի խոցելիություններից, Հայաստանում բախվում են ծառայությունների հասանելիության դժվարությունների՝ հատկապես ԳԲ (գենդերային բռնության) աջակցության ոլորտում: Մեկուսացումը, գերբնակեցված և անբավարար բնակարանային պայմանները ինչպես նաև հաճախ անձնական տարածքի բացակայությունը սպառնում են նրանց անվտանգությանն ու բարեկեցությանը: Կանայք, որոնք տնային տնտեսություններ են ղեկավարում, դեռահաս աղջիկները, հաշմանդամություն ունեցող կանայք և գյուղական տարածքներում բնակվողները առավել խոցելիների թվում են:

Բազմաթիվ փախստական կանայք և աղջիկներ դժվարանում են սոցիալապես ինտեգրվել: Դեռահաս աղջիկների համար հատկապես բարդ է նոր միջավայրում ընկերական հարաբերություններ հաստատելու և հարմարվելու գործընթացը: Կրթության և ապրուստի միջոցների նվազ հասանելիությունն ավելի է սրվում՝ գենդերային նորմերով, տնտեսական կախվածությամբ և խնամակալական պարտականություններով պայմանավորված: Արդյունքում՝ որոշ փախստական աղջիկներ դուրս են մնում դպրոցից՝ իրենց ընտանիքներին աջակցելու համար, իսկ կանայք հաճախ մնում են տանը՝ մշակութային նորմերի և անվտանգության մտահոգությունների պատճառով:

Փախստական կանայք և աղջիկները առավելապես տուժում են բռնությունից՝ ներառյալ զուգընկերային բռնությունը (ԶԲ), ոտնձգությունները և ֆիզիկական բռնությունը: Այս դեպքերը հաճախ չեն հաղորդվում աջակցող կամ պատկան մարմիններին՝ խարանի, տնտեսական անկախության բացակայության և ԶԲ-ի նորմալացման պատճառով: Նշված իրավիճակը ձևավորվում է հակամարտության ընթացքում կուտակված տրավմաների հետևանքով:

Թեև հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության ծառայությունները Հայաստանում հասանելի են, դրանք հաճախ հարմարեցված չեն դեռահաս աղջիկների և հաշմանդամություն ունեցող կանանց հատուկ կարիքներին: [8]

Առաջարկներ տեղական իշխանություններին

- **Արտակարգ իրավիճակների գենդերազգայուն պատրաստվածության ինտեգրում տեղական շրջանակներում:**

Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման տեղական ծրագրերում ներառել գենդերազգայուն ռազմավարություններ՝ հատկապես փախստական կանանց և աղջիկների յուրահատուկ խոցելիությունները հաստեագրելու համար: Համոզվել, որ այդ ծրագրերը արձագանքում են գենդերային բռնության, տեղահանության և առողջապահական ծառայությունների հասանելիության խնդիրներին:

- **Կանանց համար անվտանգ տարածքների ստեղծում և պահպանում:**

Համոզվել, որ արտակարգ իրավիճակների համար նախատեսված ապաստարաններում առկա են անվտանգ տարածքներ՝ հատկապես բռնությունից տուժած կանանց և աղջիկների համար: Այս տարածքները պետք է նախագծված լինեն այնպես, որ ապահովեն կանանց անձնական տարածքով, պաշտպանեն շահագործումից և տրամադրեն անհրաժեշտ ծառայություններ:

Համայնքի առաջնորդներին ներգրավել ապաստարանների անվտանգության պահպանման գործում՝ ստեղծելով կանոնավոր հաղորդակցություն տեղի վստահելի այն անձանց հետ, որոնք կարող են վերահսկել այդ տարածքների անվտանգությունը:

- **Անվտանգության աուդիտների և խորհրդակցությունների իրականացում:**

Կանոնավոր կերպով գնահատել ապաստարանների և այլ ժամանակավոր կացարանների անվտանգությունը՝ աուդիտների միջոցով:

- **Գենդերային բռնության դեպքերի հաղորդման և աջակցության մեխանիզմների ամրապնդում:**

Ստեղծել գենդերային բռնության դեպքերի հաղորդման այնպիսի մեխանիզմներ, որոնք կպահպանեն գաղտնիություն, հեշտ հասանելի կլինեն և կկարևորեն վերապրածների արժանապատվության պաշտպանությունը:

- **Կանանց մասնակցության ապահովում որոշումների կայացման գործընթացներում:**

Ակտիվորեն ներգրավել փախստական կանանց և աղջիկներին արտակարգ իրավիճակներին առնչվող որոշումների կայացման գործընթացներում՝ ներառելով նրանց տեսակետներն ու կարիքները ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակի քաղաքականությունների մշակման և իրականացման փուլերում:

Առաջարկներ կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպություններին

- **Խթանել արտակարգ իրավիճակների գենդերազգայուն պլանի իրագործմանը:**

Խթանել արտակարգ իրավիճակների արձագանքման ազգային և տեղական շրջանակներում գենդերային զգայուն միջոցառումների ներառմանը: Այս միջոցառումները պետք է առաջնահերթությունը տան տեղահանված կանանց և աղջիկների կարիքներին, հատկապես անվտանգության, հոգեկան առողջության և ռեսուրսների հասանելիության տեսանկյունից:

- **Տրամադրել գենդերային կարիքներին հատուկ անվտանգության և առողջության վերաբերյալ ուսուցում:**

Համագործակցել դպրոցների, համայնքների և կազմակերպությունների հետ՝ երիտասարդ աղջիկներին և կանանց անվտանգության և առողջության վերաբերյալ ուսուցում տրամադրելու համար: Այդ դասընթացները պետք է ներառեն թեմաներ, թե ինչպես պաշտպանվել բռնությունից, ինչպես դիմել բուժօգնության արտակարգ իրավիճակների ժամանակ, և տեղահանվելիս ինչպես մնալ անվտանգ:

Կազմակերպել հասակակիցների կամ գործընկերների կողմից իրականացվող դասընթացներ, որոնց ընթացքում երիտասարդ աղջիկներն ու կանայք առաջնորդություն կցուցաբերեն՝ համայնքի մյուս անդամներին կրթելու գործում: Այս մոտեցումը կնպաստի այդ աղջիկների և կանանց հզորացմանը, ինչպես նաև կայուն կրթական ջանքերի ապահովմանը:

- **Առաջարկել կարիքներին համապատասխանեցված հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության ծառայություններ:**

Ընդլայնել տեղահանությունից տուժած կանանց և երեխաների համար հոգեկան առողջության ծառայությունների և հոգեսոցիալական աջակցության հասանելիությունը: Սա պետք է ներառի հոգեկան առողջության աջակցման շարժական կենտրոնների և վիճակակիցների աջակցության խմբերի ստեղծումը, որոնք կայցելեն հեռավոր շրջաններում ապրող այն կանանց, որոնք հասանելիություն չունեն քաղաքներում կենտրոնացված ծառայություններին:

Տեղակայել հոգեկան առողջության աջակցման շարժական կենտրոններ հեռավոր շրջաններում՝ պարբերաբար այցելելու փախստականների ճամբարներ և աջակցություն տրամադրելու նրանց:

Կազմակերպել վիճակակիցների կողմից ղեկավարվող աջակցության խմբեր, որտեղ կանայք և աղջիկները կկիսվեն իրենց փորձով և հաղթահարման ռազմավարություններով:

- **Նպաստել սոցիալական ինտեգրման ծրագրերի իրականացմանը:**

Կազմակերպել համայնքաշինական միջոցառումներ, որոնք կնպաստեն փախստական կանանց և աղջիկների սոցիալական ինտեգրմանը՝ օգնելով նրանց կապեր հաստատել ընդունող համայնքների հետ: Սա կարող է ներառել աշխատարանների, սոցիալական ակումբների կամ մենթորական միջոցառումների իրականացումը՝ կենտրոնանալով փորձի փոխանակման և դիմակայունության ձևավորման վրա:

Առաջարկներ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին

- **Սերտ համագործակցություն՝ ապահովելու արտակարգ իրավիճակների արձագանքման գենդերազգայուն շրջանակների ներառումը ծրագրերում:**

Սերտորեն համագործակցել տեղական իշխանությունների հետ՝ ապահովելու գենդերազգայուն շրջանակների ներառումը աղետների արձագանքման ազգային և տեղական ծրագրերում:

- **Կանանց առաջնորդության խթանում արտակարգ իրավիճակների արձագանքման գործընթացում:**

Զորեղացնել փախստական կանանց՝ արտակարգ իրավիճակների արձագանքման գործընթացում առաջնորդող դեր ստանձնելու համար: Տրամադրել անհրաժեշտ դասընթացներ և ռեսուրսներ, որ նրանք կարողանան ակտիվորեն մասնակցել որոշումների կայացմանը՝ վստահ լինելու, որ նրանց ձայնը լսելի է, իսկ կարիքները՝ բավարարված:

- **Ծառայությունների բաշխման շարժական կենտրոնների տեղակայում:**

Հեռավոր բնակավայրերում տեղակայել ծառայությունների բաշխման շարժական կենտրոններ, որոնց միջոցով շարժունակության խնդիր ունեցող փախստական կանայք և աղջիկները կստանան անհրաժեշտ ծառայություններ, ինչպիսիք են սնունդը, առողջապահական և հիգիենիկ պարագաները:

Այս կենտրոնները նախագծելիս պետք է հաշվի առնել մշակութային առանձնահատկությունները և առաջնահերթությունը տալ խոցելի և խնամակալական պարտականություններ ունեցող կանանց:

ԳԲ կանխարգելման և արձագանքման մեխանիզմների հզորացում:

Դիտարկել արտակարգ իրավիճակներում գենդերազգայուն միջոցառումների արդյունավետությունը և համագործակցել տեղական իշխանությունների, կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունների հետ՝ համոզվելու, որ այդ միջոցառումները կայուն են, համակարգված և ազդեցիկ: Խթանել ԳԲ կանխարգելման և արձագանքման համակարգերի ուժեղացմանը՝ համոզվելու, որ տեղահանված կանայք և աղջիկները համապարփակ աջակցություն են ստանում՝ ներառյալ իրավաբանական, բժշկական և հոգեբանական ծառայությունները:

Տրամադրել դասընթացներ խնամակալներին և համայնքի առաջնորդներին:

Կազմակերպել համայնքահեն դասընթացներ խնամակալների և համայնքի առաջնորդների համար՝ օգնելու նրանց հասկանալ փախստական կանանց և աղջիկների առանձնահատուկ խոցելիությունները և տրամադրելու անհրաժեշտ հմտություններ՝ բռնությունը և տրավման վերապրածներին աջակցելու: Այս դասընթացները պետք է ներառեն բռնության նշանները նկատելու, առաջնային աջակցություն տրամադրելու և դեպի համապատասխան մասնագիտական ծառայություններ ուղղորդելու հմտությունները:

Ծանոթագրություններ

1. International Federation of Red Cross and Red Crescent Societies. (2018). Emergency preparedness and response: A guide for local authorities. Retrieved from https://www.ifrc.org/en/publications-and-reports/publications/emergency-preparedness-and-response-a-guide-for-local-authorities/
2. United Nations Women. (2015). Humanitarian action: Facts and figures. Retrieved from https://www.unwomen.org/en/what-we-do/humanitarian-action/facts-and-figures
3. United Nations High Commissioner for Refugees. (2015). Sexual and gender-based violence against refugees, returnees and internally displaced persons: Guidelines for prevention and response. United Nations High Commissioner for Refugees. Retrieved from https://www.unhcr.org/50a7c3e4b.pdf
4. United Nations High Commissioner for Refugees. (2015). Inter-Agency Standing Committee Guidelines for Integrating Gender-Based Violence Interventions in Humanitarian Action: Reducing risk, promoting resilience and aiding recovery. Retrieved from https://gbvguidelines.org/wp/wp-content/uploads/2015/09/IASC-Gender-Based-Violence-Guidelines-2015.pdf
5. World Health Organization. (2020). Mental health and psychosocial support in emergency settings: A guide for decision-makers. Retrieved from https://www.who.int/publications/i/item/mental-health-and-psychosocial-support-in-emergency-settings-a-guide-for-decision-makers
6. United Nations Women. (2020). Gender and Humanitarian Action: Addressing the needs of women and girls in emergencies. United Nations Women. https://www.unwomen.org/en/what-we-do/humanitarian-action
7. United Nations Children's Fund. (2014). Enhancing gender in humanitarian response. Retrieved from https://www.unicef.org/rosa/media/2481/file/EnhancingGenderinHumanitarianResponse.pdf
8. United Nations Population Fund. (2024). We Are Here: A Qualitative Rapid Assessment of Gender-Based Violence among Refugees in Armenia. Retrieved from https://armenia.unfpa.org/en/publications/we-are-here-qualitative-rapid-assessment-gender-based-violence-among-refugees-armenia

Այս հրապարակման մեջ արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ ներկայացնեն ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպության, Շվեդիայի և Նորվեգիայի կառավարությունների կամ նրանց հետ փոխկապակցված կազմակերպությունների տեսակետները: Հրապարակումը իրականացվել է Շվեդիայի և Նորվեգիայի կառավարությունների ֆինանսական աջակցությամբ: